‹‹ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ.65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ›› ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ Պատմություն և հասարակագիտություն

Մասնակից՝ Անահիտ Գրիգորյան

Ղեկավար՝ Արմինե Սաֆարյան

Թեմա՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը պատմության դասավանդման ընթացքում

Երևան,2023թ.

Բովանդակություն

Ներածություն ---------- 2-3

1. Արժեքային պատկերացումները հանրակրթական համակարգում ----------4-8

2. Արժեքային համակարգի ձևավորումը պատմության ուսուցման գործընթացում-- 9-11

3.1 Դասի պլան ----------12-13

3.2 Դասի պլան ----------14-16

Եզրակացություն----------17

Օգտագործված գրականության ցանկ----------18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<<Կրթությունն ազատության ոսկե դուռը բացելու բանալին է>>
Ջորջ Վաշինգտոն

Հետազոտական աշխատանքի թեմայի արդիականությունը

Մարդու կատարած ամեն մի արարք, այս կամ այն կերպ, ազդում է ուրիշ մարդկանց վրա, արժանանում շրջապատի մարդկանց ուշադրությանը,նրանց կողմից գնահատվում:

Արժեքային համակարգը անձնական բնութագիր է, որն իրար է միացնում այնպիսի որակներ ու հասկացություններ, ինչպիսիք են բարությունը, պարզությունը,անձնական մաքրությունը, աշխատասիրությունը, կարգապահությունը, կոլեկտիվիզմը և այլն: Այս հիմնախնդիրները դրված են ժամանակակից ուսուցիչների վրա:

Մարդու դաստիարակությունը, նրա հոգևոր զարգացած անհատականությունը, իր հայրենիքի նկատմամբ սերն ու հարգանքը , կարևոր պայման է տվյալ երկրի զարգացման համար: Ազգային հիմնական արժեքները պետք է ներառվեն բոլոր կրթական ծրագրերում, դպրոցական կյանքի մաս դառան,որպեսզի դպրոցական գործունեությունը որպես մարդ, անհատ, քաղաքացի, իր դաստիարակության շնորհիվ, օգնի նրան դառնալ բարձրակարգ, պատասխանատու, նորարար, կրեատիվ և կիրթ քաղաքացի:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ներկայացնել պատմության դասավանդման ընթացքում արժեքային համակարգի ձևավորման առանձնահատկությունները:

Ելնելով առաջադրված նպատակից առաջադրվել են հետևյալ **հետազոտության խնդիրները՝**

1. Ուսումնասիրել արժեքային համակարգ հասկացությունը
2. Ներկայացնել արժեքային պատկերացումները հանրակրթության համակարգում
3. Վերլուծել արժեքային պատկերացումների ձևավորման առանձնահատկությունները հայոց պատմության դասավանդման ընթացքում:

Հետազոտական աշխատանքի առարկան և օբյեկտը

Ուսումնասիրության առարկան աշակերտի արժեքային համակարգն է:

Ուսումնասիրության օբյեկտը արժեքային համակարգի զարգացումը

պատմության դասավանդման ընթացքում:

Հետազոտության մեթոդաբանությունը: Ելնելով հետազոտության մեջ առաջադրված խնդիրներից՝կարելի էկիրառել նաև հետևյալ մեթոդները.

Կերպարային քարտ՝ սա հրաշալի միջոց է պատմական կարևոր իրադարձությունները <<ներսից>>՝ տարբեր կերպարների դիտանկյունից ուսումնասիրելու համար: Քարտը ներկայացնում է տվյալ իրադարձության կերպարների մտադրությունները,հուզական վիճակները, տեսանկյունները: Կերպարային քարտը կարող է պատմական ակտիվ մտածողություն կիրառել խթանող տարատեսակ հարցադրումների քննարկման համար:

Կոնկրետ պատմական կերպարներին անդրադառնալը նպատակ ունի վերաիմաստավորելու ազատագրական պայքարի նվիրյալների օրինակելի կենսագործունեության հիմնական դրվագները, հատկանշելու հերոսի բարոյակամային բարձր ոգին, ինչը հնարավորություն կտա ուրվագծելու այն ուսումնական նյութը, որը դրական ազդեցություն կունենա սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության համար:

Հետազոտության վարկածը Սովորողների մոտ ազգային արժեհամակարգի ձևավորումն ավելի արդյունավետ կլինի,եթե.

1. Գրականություն-պատմություն-սովորող փոխազդեցությունը դիտարկվի որպես զարգացման կարևոր և անհրաժեշտ գործընթաց և կրթադաստիարակչական գործընթացի անքակտելի մաս:
2. Մշակվի և հանրակրթության բնագավառում ներդրվի սովորողների ազգային արժեհամակարգի ձևավորման և զարգացման մոդելը՝ հաշվի առնելով ազգային և համամարդկային արժեհամակարգերի միաժամանակյա ուսուցման անհրաժեշտությունը:

Աշխատանքի կառուցվածքը

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրներից և գրականության ցանկից:

1. Արժեքային պատկերացումները հանրակրթական համակարգում

Արժեքային պատկերացումների խնդիրը պատմության ողջ ընթացքում արդիական է եղել: Համոզմունքն ու արժեքները անձին պատրաստի չեն տրվում, դրանք հանդիսանում են անձի կենսագործունեության ընթացքում ձեռք բերված փորձի և իտելեկտուալ ձեռքբերումների հետևանք: Դա հատկապես կարևոր է հաշվի առնել կրթության համակարգում, որի գործունեության արդյունքում կորոշվի մեր երկրի և յուրաքանչյուր անձի ապագան:

Ժամանակակից աշխարհում կրթությունը վերաճել է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային անհրաժեշտ որակներ: Կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների և մեթոդների վերանայում և հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ որպես հանրային կրթության հիմնական օղակի նկատմամբ պետական և հասարակական հոգածության արմատական բարելավում:

Իսկ ինչպես են փոխկապված այս երկու կատեգորիաները՝ արժեքը և կրությունը ժամանակակից հասարակությունում: Արժեքները և արժեքային կողմնորոշումը հանդիսանում են փիլիսոփայության և հոգեբանության ամենաբարդ կատեգորիաներից մեկը:

Դպրոցում անմիջականորեն տեղի է ունենում արժեքների վերափոխում: Բոլոր արժեքները բաժանվում են առարկայականի և սուբյեկտիվի: Առարկայական արժեքներին են դասվում բնական և սոցիալ-մշակութային երևույթները, մարդկային գործունեության արդյունքը, որոնք գնահատվում են այնպիսի չափորոշիչներով, ինչպիսին <<բարին ուչարն է>>, <<գեղեցիկն ու տգեղը>>, <<արդարն ու անարդարը>>:

Սուբյեկտիվ արժեքներին են դասվում այն օրինակները, որոնք հանդես են գալիս որպես գնահատականի հիմնավորում: Դրանք ֆիքսվում են և գործում են հասարակության գիտակցության մեջ որպես գաղափարներ, ծրագրեր, սկզբունքներ, գործունեության թիրախներ:

Այս կամ այն օբյեկտի արժեքը սահմանվում է սուբյեկտի կողմից այն գնահատելու գործընթացում: Շատ կարևոր է հասկանալ այդ երկու գլխավոր հասկացությունների միջև տարբերությունը. արժեքը օբյեկտիվ է, այն ձևավորվում է հասարակական և պատմական պրակտիակյի գործընթացում, գնահատականը ցուցաբերում է սուբյեկտիվ վերաբերմունք արժեքների նկատմամբ և դրա համար

կարող է լինել իրական /եթե այն փաստացի համապատասխանում է արժեքին/ և սխալական, կեղծ /եթե այն արժեքին չի համապատասխանում/: Գնահատականը արժեքից կարող էլինել ոչ միայն դրական, այլ նաև բացասական: Դրա համար հենց դրա շնորհիվ է կատարվում օբյեկտների նախընտրությունը, որոնք օգտակար և պետքական են մարդուն և հասարակությանը:[1] Վերջին ժամանակներս նախապատվությունը տրվում է կրթության անհատական արժեվորմանը: Կրթությունը ունակ է ոչ միայն աջակցել հասարակությանն արժեքների ճիշտ ձևավորմանը, այլ նաև զարգացնել և հարստացնել դրանք: Ներկայիս ժամանակներում բնութագրական է հասարակության վերափոխակերպումները, վերաիմաստավորվում և փոփոխվում է արժեհամակարգը, այդ թվում նաև կրթության արժեհամակարգը:

Մեր տեղեկատվական դարաշրջանում փոխվել են աշխարհընկալման մասին պատկերացումները և մարդու տեղը դրանում: Այսամենը անհրաժեշտություն է առաջացնում կրթության պարադիգմայի փոփոխման: Ժամանակակից աշխարհի ամբողջականությունը ձևավորվում է, այդ թվում նաև տեղեկատվական տեխնոլոգիաների հաշվին, կապված ինֆորմացիոն հանրության հետ: Կրթությունը ինֆորմացիոն հասարակության ձեռքբերումներից մեկն է: Այսօր այն հիմնական միջոցն է և ռեսուրսը ստեղծագործ անձ դառնալու համար, որն ունակ կլինի հասարակության մեջ ապրելու, պատասխանատու որոշումներ կայացնելու ընտրության հնարավորության պայմաններում:

Այս նպատակից առաջանում են նոր արժեքներ, որոնք համապատասխանում են ժամանակակից հասարակության պահանջմունքներին:[2]

Բուն կրթության էությունը կայանում է մարդու մարդ դառնալու մեջ, անհատի կողմի ց բազմակողմանի անհատական արժեքների ձեռքբերումով: Դրա համար այս օր գլխավորը հանդիսանում է այն հարցի պատասխանը, թե ինչպիսին պետք է լինի ժամանակակից մարդը, որպեսզի կրթությունը կարողանա նրան համապատասխանի: Դրա համար անհրաժեշտ է սահմանել, թե որն է կրթության առաքելությունը մարդու և հասարակության կյանքում:

Այսպիսով՝ հանրակրթությունը ժամանակակից քաղաքակրթության նվաճումներից է: Հենց հանրակրթական իմաստով վերաձևակերպված կրթական խնդիրները մարդկության համար դրսևորվեցին որպես պետական ու հասարակական կյանքի կազմակերպման բարդ հիմնահարց: Այսօր, փաստորեն, չկա մի երկիր, որը, բավարարված լինելով իր կրթական համակարգի իրավիճակով, չկարևորի այդ համակարգի բարեփոխման խնդիրը:

---

[1]ՏեսПискунов А.И. История педагогики и образование. Под ред. [Текст] / Под ред. А.И. Пискунова –Москва: ТЦ«Сфера»,2001.——512с.
[2]Տես Гершунский Б.С.Философия образования.[Текст]/Б.С.ГершунскийМосква.:Совершенство,1998.-608с.

Հանրակրթության առաքելությունը որոշակիացվում է հիմքում դնելով ՀՀ ազգային-պետական շահերը, ազգային դպրոցի ամրապնդումը, հայապահպանությունը և շրջանավարտների մասնագիտական կողմնորոշման, աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցման խնդիրները:

ՀՀ զարգացման արդի փուլի համար հանրակրթության առաքելությունն է՝ առաջիկա տասնամյակների ընթացքում ապահովել յուրաքանչյուր անհատի համակողմանի ու ներդաշնակ, կայուն և շարունակական զարգացման և կրթվելու համար առավելագույն նպաստավոր պայմաններ և հավասար հնարավորություններ:

Հանրակրթության առաքելության իրականացումը դիտարկվում է որպես պետության և ազգի անվտանգության ապահովման ու հզորացման գործում գերակա խնդիր՝ ուղղված ազգային և համամարդկային արժեքներով առաջնորդվող, պետական մտածելակերպ ունեցող, արդի և ապագայի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ, ազատ, ստեղծագործող և կամային բարձր որակներով օժտված մարդ և քաղաքացի:

Կրթության ոլորտում հանրակրթության առաջանցիկ զարգացումը շարունակում է մնալ գերակա ուղղություն և նպատակաուղղված է լուծելու հետևյալ հիմնականխնդիրները.

1) ձևավորել անհատ, որը կունենա բարոյական՝ ճշմարիտի, գեղեցիկի և բարու վրա հիմնված, իդեալներ և որն ունակ կլինի գործնական քայլերի հանուն այդ իդեալների,

2) նպաստե լմարդու, քաղաքացու իդեալների ձևավորմանը և միաժամանակ դաստիարակել դրանց իրագործման համար անհրաժեշտ կամային որակներ,

3) ապահովել տեղեկատվական հոսքերի արագության պայմաններում և դրանց մեջ ազատ կողմնորոշվելու, անծանոթ իրավիճակում ինքնուրույն և անկաշկանդ գործելու ունակությունների զարգացումը,

4) հոգևոր աղքատացման վտանգից մարդու ներաշխարհի պահպանումը և միաժամանակ նրա լիարժեք ու ներդաշնակ սոցիալականացման ապահովումը:

Կրթությունը հասարակության հոգևոր, տնտեսական և սոցիալական առաջընթացի հիմնական գործոններից է: Նրա բովանդակությունը նպատակաուղղված է երիտասարդ սերնդի ուսուցմանը և դաստիարակմանը, նրա ինքնորոշման և ինքնադրսևորման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը:

Կրթության բովանդակությունն ապահովվում է՝

1) սովորողների աշխարհաճանաչման ձևավորումը գիտելիքների և կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակին (աստիճանին) համապատասխան.

[1]ՏեսԴ ավթյանՆ., Կրթության բովանդակության ներկա հիմնախնդիրները, «Մանկավարժություն» ամսագիր N4, 2003, էջ 6-15

2) սովորողների կողմից ազգային և համամարդկային արժեքների յուրացումը.

3) հասարակության կատարելագործումը և ազգի զարգացման նոր մակարդակ ապահովող ժամանակակից անհատի ու քաղաքացու ձևավորումը.

4) Հասարակության մտավոր ներուժի և աշխատուժի վերարտադրությունն ու զարգացումը:

Ժամանակակից կրթական հարացույցը նպատակաուղղված է մարդու մտավոր համակողմանի, ներդաշնակ, շարունակական և մշակութային կայուն զարգացմանը, ամբողջ կյանքի ընթացքում կրթվելու ձգտում և հնարավորություն ապահովելուն: Այն ենթադրում է այնպիսի կոմպետենցիաների ամբողջության ձևավորում, որոնք հիմնված են գիտելիքների, կարողությունների, հմտությունների, պրակտիկ գործունեության, հասարակության իրական պահանջմունքների և երեխայակենտրոն մոտեցման վրա:

Ազգային արժեհամակարգին համապատասխան սահմանվում և բովանդակում են անհատի բարոյահոգեբանական զարգացումն ու դաստիարակությունը: Ամենակարևորներից մեկը, մեր կարծիքով, հանդիսանում է ընտանիքը: Ընտանիքը դրված է դպրոցականի հոգևոր մշակույթին և բարոյական դաստիարակության հիմքում, և առաջին հերթին կանխորոշում է մասնակիցների արտաքին և ներքին գործունեությունը: Հենց ընտանիքում են պայմաններ ստեղծվում երեխայի անհատականության ինքահաստատման համար, նրա ունակությունների զարգացման, տաղանդի, գիտելիքների փոխանցման, հմտությունների և կոմպետենցիայի, որոնք անհրաժեշտ են երեխայի հաջող սոցիալիզացիայի համար:

Մեր ժամանակակից հասարակությունում ընտանիքը, ինչպես նաև պետությունը կրթության նկատմամբ հանդես է գալիս որպես պատվիրատու, բայց նա հանդես է գալիս որպես դաստիարակության մասնակից, քանի որ ժամանակակից պայմանները թելադրում են դաստիարակչական գործունեության կազմակերպման անհրաժեշտությունը <<դպրոց-ընտանիք-հասարակություն>> համակարգում, որտեղ այդ երեքը հավասարապես ակտիվորեն փոխահամագործակցում են միմյանց հետ և փոխադարձաբար լրացնում միմյանց:[1] Հնարավոր չէ ստեղծել ժամանակակից ինովացիոն տնտեսություն, շրջանցելով մարդուն, նրա ներքին վիճակն ու կարգավիճակը, հոգևոր կյանքը: Հասարակության զարգացման տեմպն ու բնույթը ուղիղ կերպով կախված են մարդու քաղաքացիական դիրքորոշումից, նրա կենսական առաջնահերթությունից, ներքին համոզմունքներից, բարոյական նորմերից և հոգևոր արժեքներից:

[1]Stu ЗимняяИ.А.Педагогическая психология.[Текст]/И.А.Зимняя Москва.:Издательская корпорация «Логос»,2000.384с.

2. Արժեքային համակարգի ձևավորումը պատմության ուսուցման գործընթացում

<<Չկա ուսուցում,որ չդաստիարակի,և դաստիարակություն, որ չուսուցանի>>
Հ.Ֆ.Հերբարդ

Սովորողի համակողմանի զարգացման հիմքը արժեքային համակարգի ձևավորումն է՝ ազգային և համամարդկային արժեքների գիտակցումը: Մանկավարժական արժեբանության կիրառական տեսանկյունից այս դրույթը արտացոլվում է հանրակրթության կրթական չափորոշիչներում, ուսումնական ծրագրերում, ուսումնական պլաններում, դասագրքերում, դիդակտիկ և մեթոդական նյութերում: Դպրոցը, հանդիսանալով անձի կրթության , դաստիարակության դարբնոցը, սերնդից սերունդ փոխանցում է հասարակության մեջ կուտակված նյութական, տնտեսական, սոցիալական, հոգեբանական, բարոյական, գեղագիտական, ճանաչողական և այլ բնույթի արժեքներ: Սովորողի հոգեմտավոր ներաշխարհը ձևավորվում է ազգային և համամարդկային արժեքների գիտակցության ներքո, իսկ այդ արժեքներն ընկած են մարդասիրական կրթության հիմքում: Սովորողի ճանաչողական արժեքները ձևավորվում են գիտելիքի միջոցով. մտորել-գնահատել—իմաստավորել- յուրացնել ճանաչողական արժևորման տրամաբանական քայլերը սկսվում են գիտելիքի փոխանցմամբ: Հետևաբար, գիտելիքը համարվում է առաջնային արժեքկրթական արժևորման աստիճանակարգում: Անձի կրթվածություն ասելով՝ հասկանում ենք ոչ միայն գիտելիքների համակարգի տիրապետում, այլևս տեղծագործական ունակությունների դրսևորում, համագործակցային, ինքնաարտահայտման որակների առկայություն, արժեքայի գիտակցություն:

Սովորողի արժեքային կողմնորոշման, արժեքային գիտակցության, արժեքային վարքագծի ձևավորումը սկսվում է դեռևս տարրական դպրոցից և կրում շարունակական բնույթ: Երեխան դեռևս տարրական դպրոցից բացահայտում է գեղեցիկը, արդարը, սերը և նման համամարդկային արժեքներ, որոնք արմատավորվում են անհատի հոգևոր աշխարհում: Միջնակարգ կրթության բովանդակային բաղադրիչները որոշակիացվում են՝ ըստ ուսումնական բնագավառների ու հանրակրթական դպրոցի աստիճանների՝ հաշվի

առնելով սովորողների զարգացման ֆիզիոլոգիական, հոգեբանական և ազգային առանձնահատկությունները:

		ԱՐԺԵՔԱՅԻՆՀԱՄԱԿԱՐԳ
	ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎՀՄՏՈՒԹՅՈՒՆ	Գործողությունվերաբերմունք վարք
ԳԻՏԵԼԻՔ Առարկայականգիտելիքներ	⇩ Ճանաչողականմեթոդներ Վերլուծում,մասնավորում,համադրում,վերացարկում,անդրադարձում,մակածում /ինդուկցիա/,արտածում/ դեդուկցիա/,ընդհանրացում, կանխատեսում	Ձևավորումենանձև քաղաքացիհետևյալորակներով՝ ✓ հայրենասեր ✓ ազգասեր ✓ աշխատասեր ✓ բարոյական ✓ ազնիվ ✓ արդարամիտ ✓ ընկերասեր ✓ ծնողասեր ✓ մարդասեր ✓ հանդուրժող ✓ քաղաքակիրթ ✓ բարեկիրթևայլն

Անձ—քաղաքացու ձևավորման համար վերոնշյալ որակները համամարդկային են և տարիքային սահմանափակում չեն ճանաչում: Ըստ դիդակտիկայի փոխհաջորդելիության սկզբունքի՝ ուսուցման եռաստիճան համակարգում՝ տարրական, միջին և ավագ դպրոցներում, ենթադրվում է անընդմիջելի կապ՝ գիտելիքների և դրանց միջոցով արժեհամակարգի ձևավորման առումով:

Ուսումնական գործընթացի կազմակերպման ձևերից մեկն էլ կրկնության դասն է, որը հնարավորություն է տալիս համակողմանիորեն դիտարկել ու լայն թեման մեր ուսումնասիրության դեպքում՝ արժեհամակարգի տեսանկյունից: Թեմայի ընձեռած հնարավորության սահմաններում մտորելու, գնահատելու, իմաստավորելու, յուրացնելու, արժևորելու տրամաբանական քայլերը հանգեցնում են արժեքային գիտակցության:

Կարդացածը պատմելու, քննարկելու, տարբեր թեմաներով զրույցներ անցկացնելու, երկխոսություններ կառուցելու միջոցով աշակերտների արժեքային համակարգի զարգացումը պատմության դասավանդման խնդիրներից է և բխում է պատմություն առարկայի ուսումնական ընդհանուր նպատակներից: Իրականության նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը սկսվում է օբյեկտիվ գնահատականներ տալով, հետևաբար, պատմության ուսուցումը պետք է ծառայեցնել նաև անհատի ու քաղաքացու բարոյական կերպարի և արժեքային համակարգի ձևավորմանը:

Պատմության դասավանդումը դպրոցում, հատկապես «Հայոց պատմություն» առարկայի, ըստ պետական հայեցակարգի, կապվում է հայի ազգային ինքնագիտակցության ու մտածողության հետ, նրա միջոցով ապահովվում է աճող սերնդի հաղորդակցումը մեր ժողովրդի անցյալի և պատմամշակութային ժառանգությանը: Այստեղից է բխում քաղաքացի կրթելու և դաստիարակելու խնդիրը: Դաստիարակչական խնդիրները, հենվելով գաղափարական հիմքերի վրա, անդրադառնում են ուսուցման նյութի բովանդակությանը: Պատմական կրթությունն ունի քաղաքացի դաստիարակելու, հայրենասիրություն, ազգասիրություն սերմանելու, ներկա ժամանակների իրողությունների վերաբերյալ գիտելիքներ փոխանցելու, հայկական մշակութային նվաճումները աշխարհի մշակութային նվաճումների հետ համեմատելու նպատակներ: Պատմական գիտելիքների փոխանցման, օրինաչափությունների յուրացման գործընթացը իրականացնում է անձի դաստիարակման և զարգացման տարբեր միջոցներով: Հետևաբար, պատմության դասավանդման արդիականությունը ուղղակիորեն կապված է ակտիվ դիրքորոշում ունեցող քաղաքացի ձևավորելու, խնդրի հետ: Պատմական կրթությունն ունի քաղաքացի դաստիարակելու, հայրենասիրություն, ազգասիրություն սերմանելու, ներկա ժամանակների իրողությունների վերաբերյալ գիտելիքներ փոխանցելու, հայկական մշակութային նվաճումները աշխարհի մշակութային նվաճումների հետ համեմատելու նպատակներ:

3.1.Դասի պլան

Դասարան-11-րդ

Առարկա- Հայոց պատմություն

Դասի թեման- ՀՀ անկախության Հռչակումը**:**

Դասի տիպը – ամրապնդման

Դասի կառուցվածքը- ԽԻԿ

Դասի նպատակը- Ուսուցանել ՀՀ անկախության հռչակման նախադրյալներին, անկախության հռչակման գործընթացին:

Կկարողանան վերլուծել ՀՀ անկախության հռչակման սոցիալ-քաղաքական պայմաններ:

Կձևավորվի գիտելիքներ ՀՀ պետական կառավարման ապարատի ձևավորման մասին:

Կհասկանան և կկարևորեն ընտրությունների դերը:

Օժանդակ նյութեր-քարտեզ,նկարներ,սահիկաշար:

Դասի ընթացքը- Նախամուտք (խթանում)

Ուսուցիչ- Թվարկեք այն հանգամանքները որոնք նպաստեցին անկախությա հռչակմանը:

Լսել և քննարկել կարծիքները:

Իմաստի ընկալում՝ խմբայինաշխատանք

Ուսուցիչը առաջարկում է բաժանվել հինգ խմբի: Խմբերի բաժանվելուց հետո իրենք կընտրեն խմբի ղեկավար: Ղեկավարները կմոտենան արկղին և կվերցնեն քարտեր,որտեղ գրված են՝ ինչ պետք է անեն:

Առաջինխումբ-ներկայացնել վերակառուցման քաղաքականության մասին տեղեկատվություն:

Երկրորդ խումբ-ներկայացնել անկախության հռչակագիրը

Երրորդ խումբ-ուսումնասիրել ՀՀ պետական կառավարման համակարգի ձևավորման փուլը

Չորրորդ խումբ-ներկայացնել Անկախության հանրաքվեի և նախագահական ընտրության արդյունքները

Հինգերորդ խումբ-Ներկայացնել սահմանդրության հանրաքվեն և ԱԺ առաջին գումարման ընտրությունները

Սովորողները թեման ուսումնասիրում են, համացանցով հավաքում տեղեկատվություններ և ներկայացնում խմբային ռեֆերատ: Ուսուցիչը ստուգում է արդյունքները և խմբերին ուղղորդում, շտկումներ անում:

Աշխատանքի համար նախատեսվում է- 3օր:

Կշռադատում՝հարցադրումներ

Աշակերտները ներկայացնում են իրենց աշխատանքները:

Իրականացվում քննարկումներ:

3.2 Դասի պլան

Դասարան -11-րդ

Առարկա -Համաշխարհային պատմություն

Դասի թեման- Երկրորդ համաշխարհային պատերազմ

Դասի նպատակը - Ա և Բ մակարդակների պահանջները

Սովորողներին ներկայացվող պահանջները.

Ա մակարդակ

Ա.Իմանան, որ 20-րդ դարը, շատ առումներով առաջադիմական լինելով հանդերձ, նաև պատերազմների դարաշրջան էր, երբ տարբեր քաղաքական ռեժիմներում ազգայնամոլությունը խլեց միլիոնավոր մարդկային կյանքեր, և համաշխարհային մշակույթը ունեցավ մեծ կորուստներ:

Բ.Կարողանան ներկայացնել Երկրորդ համաշխարհային պատերազմի փուլերը, երկրորդ ճակատի բացման դրդապատճառները, հետևանքները:

Գ.Իմանան երկրորդ ճակատի բացման առնչվող կարևոր իրադարձությունների, թվերի, փաստերի, դերակատարների մասին:

Բ մակարդակ

Ա.Կարողանան պարզաբանել, թե ինչու ստեղծվեց հակաֆաշիստական կոալիցիան:

Գ.Կարողանան բացատրել այդ կոալիցիայի գործունեության առանձնահատկությունները:

Դ.Կարողանան արտահայտել իրենց կարծիքը կոալիցիայի ղեկավարների հանդիպումների և քննարկումների մասին շարժառիթների, փուլերի, ընթացքի և ավարտի մասին:

Ե. Փաստեր ներկայացնեն և ապացուցեն, որ այլընտրանք չկար, և անպայման անհրաժեշտ էր երկրորդ ճակատի բացումը:

Զ.Կարողանան փաստերը վերլուծել, համադրել, հակադրել, կատարել եզրակացություն:

Սոցիալական-կարողանան համագործակցել, ցուցաբերել հանդուրժողականություն, ունենան վստահություն սեփական ուժերի հանդեպ:

Կարևոր են պայքարը մարդկության համար չարիք հանդիսացող պատերազմների կասեցման և մարդկության խաղաղ և անդորր կյանքը ապահովելու համար:

Ուսումնական նյութ-գրքեր, տետրեր, քարտեզ, նկարներ, ցուցապաստառ, լրացուցիչ գրականություն, տեսաֆիլմ:

Հիմնական հասկացություններ և անուններ- «Բարբարոսա» պլան, «կայծակնային պատերազմ», <<հակահիտլերյան միություն>>, «երկրորդ ճակատ», «Թեհրանի խորհրդաժողով»:

Դասատիպ-ամփոփիչ դաս

Մեթոդներ- հարցման, պատմելու, ներածական դասախոսության, աշխատանք զույգերով, քննարկման, համեմատության, գործնական աշխատանքի, անդրադարձի:

Ներառարկայական կապ- համաշխարհային պատմություն

Միջառարկայական կապ- աշխարհագրություն, հայոց պատմություն, ռազմագիտություն:

Դասի ընթացքը

Կազմակերպչական մաս-3րոպե

Խթանման փուլ — մտագրոհ «կոալիցիա» բառի շուրջ, կատարել հասկացությունների քարտեզագրում ,խմբավորում:

Ներկայացնել դասի նպատակը համառոտ դասախոսությամբ: 7րոպե

Իմաստի ընկալման փուլ- աշխատանք զույգերով,հիմնախնդիրների շուրջ քննարկման կազմակերպում, գործնական աշխատանք (աշխատանք քարտեզով, ժամանակագրություն),մրցույթ զույգերի միջև: 25րոպե

Քննարկման հարցեր

1. Ինչու՞Խորհրդային Միությանը հիտլերյան Գերմանիայի պարտադրած պատերազմը պատմության մեջ մտավ:

2. Ի՞նչ բովանդակությունուներ «Բարբարոսա» պլանը: Քարտեզի միջոցով ներկայացնել այդ պլանի բովանդակությունը:

3. Այդ կոնֆերանսին մասնակցում էին Իոսիֆ Ստալինը, Ֆրանկլին Ռուզվելտը և Ուինստոն Չերչիլը: Քննարկվում էր 2-րդ ճակատ բացելուհարցը:

Ո՞ր կոնֆերանսն էր դա: Մասնակիցներն ի՞նչ առաջարկությամբ հանդես եկան, ինչպիսի՞որոշում կայացվեց

Կշռադատման փուլ–եզրակացություն: 7րոպե

Տնային հանձնարարություն - 3րոպե

Բ.«Հասկացությունների քարտեզ»:

Ներկայացնել երկրորդ ճակատին առնչվող հասկացությունների գրառում՝ դասանյութը ամփոփելու համար:

Եզրակացություն

Այսպիսով,պատմության ուսումնասիրությունը սովորողի աշխարհաճանաչողության, ինքնաճանաչման, ինքնագնահատման և ինքնակատարելագործման արդյունավետ միջոց է և նպաստում է բարձր բարոյական հատկանիշների՝ հայրենասիրության, քաղաքացիական պատասխանատվության, մարդասիրության, կարեկցանքի, ընկերասիրության և սոցիալ-հոգեբանական այլ արժեքների արմատավորմանը: Արժեքները՝որպես մարդու գործունեության ու վարքի կողմնորոշիչներ, գոյություն ունեն անկախ անձի գիտակցությունից. հետևաբար,պատմության ուսուցումն իր կարևոր դերն է կատարում համամարդկային, բարոյական բարձր արժեքներով քաղաքացու ձևավորման հարցում: ՈՒսուցման և ուսումնառության գործընթացը կազմակերպելիս պետք է առաջնորդվել որոշակի սկզբունքներով ու նկատառումներով. Միայն այդ դեպքում հնարավոր է ապահովել սովորողի արժեքային կողմնորոշում— արժեքային դիրքորոշում — արժեքային գիտակցություն կապակցված շղթան, ինչն էլ իր գործնական արտահայտությունն է գտնում աժեքային հարաբերություններում:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ օրենքը <<կրթության մասին>> ՀՕ-297ՀՀՊՏ1999.05.14/12(78)
2. ՀՀ օրենքը <<Հանրակրթության մասին>> ՀՕ-160-ՆՀՀՊՏ2009.08.05/39(705)
3. Դավթյան Ն., Կրթության բովանդակության ներկա հիմնախնդիրները, «Մանկավարժություն» ամսագիր N4, 2003,էջ6-15
4. Гершунский Б.С.Философия образования.[Текст]/ Б.С.Гершунский Москва.:Совершенство,1998.-608с.
5. ЗимняяИ.А.Педагогическаяпсихология.[Текст]/И.А.ЗимняяМосква.:Издательскаякорпорация«Логос»,2000.—384с.
6. ПискуновА.И.Историяпедагогикииобразование.Подред.[Текст]/Подред.А.И.Пискунова—Москва:ТЦ«Сфера»,2001. —512